

ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ, ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ

Posted on March 17, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Յարութ Տէր Դաւիթեան, Լոս Անճելըս, 26 Փետրուար 2021

«Վեհ Էակը պէտք է կարողանայ կրել պարտութիւնները եւ փախուստ չտալ անոնցմէ, որովհետեւ այդ ընելով բացայայտած կ'ըլլայ մտքի պայծառութիւնը, մինչ փախուստ տալով՝ սրտի վախկոտութիւնը»:
Փիեթրօ Արեթիսօ

«Քաջ ըլլալ ճախողութեան պարագային, կը նշանակէ արժանի ըլլալ արիութեան. իմաստուն ըլլալ ճախողութեան պարագային, կը նշանակէ տիրել ճակատագրին»: Ագնես Ռեփլիէ

Պէտք է խոստովանինք, որ Արցախեան այս վերջին պատերազմին մեր կրած պարտութիւնը ծանր հոգեվիճակի մատնեց մեզ եւ վստահ ենք նաեւ ամէն ազգասեր հայ: Պէտք է խոստովանինք նաեւ, որ պարտութեան առթած ճնշումէն անելի, մեզ կը մտատանջէ այն խայտառակ իրավիճակը, որուն ականատես կ'ըլլանք Հայաստանէն ներս: **Մեր խորին համոզմամբ, անհատի կեանքին մէջ եւ կամ ազգի պատմութեան մէջ, յառաջընթաց կ'արձանագրեն անոնք, որոնք դասեր կը քաղեն ամէն մէկ պարտութիւնէ կամ ճախողութիւնէ եւ պատեհութիւնը կը ստեղծեն վերականգնելու կորսուածը:** Մեր այս համոզման բոլորովին հակառակն է, որուն ականատես կ'ըլլանք Հայաստանէն ներս: Ինչպէս որ անցնող անելի քան երկու տասնամեակներուն, պատեհապաշտ մարդիկ շահագործեցին Արցախեան առաջին պատերազմի յաղթանակը յօգուտ իրենց գրպաններուն, այսօր ալ կը շահագործեն պարտութիւնը, դարձեալ յօգուտ իրենց շահերուն: Այս ընթացքով, մենք դուռը լայն կը բանանք նորանոր աղետներու առջեւ: Մենք հոն դժբախտաբար չենք տեսներ հինգ դարեր առաջ ապրած Փիեթրօ Արեթիսոյի նշած մտքի պայծառութիւնը եւ ոչ ալ մօտ հարիւրամեակ մը առաջ ապրած Ագնես Ռեփլիէյի նշած իմաստութիւնը՝ յաղթահարելու համար պարտութիւնն ու ճախողութիւնը եւ տերը դառնալու մեր ճակատագրի կերտման:

Մեր այս յօդուածով պիտի առաջարկենք, որ ի՞նչ ուղիով պէտք է ընթանալ՝ յաղթահարելու այս պարտութիւնը, տնօրինելու մեր ճակատագիրը եւ կերտելու արժանապատիւ ապագայ մը: Դժբախտաբար, մեր կատարելիք առաջարկները բոլորովին նորութիւններ պիտի չըլլան, այլ արագ վերաքաղ մը այն գլխաւոր իրականութիւններուն, որոնք բարձրաձայնած էինք անցած մօտ երեք տասնամեակներուն մեր հրատարակած յօդուածներով: Կը յուսանք, որ Արցախեան առաջին պատերազմի յաղթանակի բերկրութեան (euphoria) ազդեցութեան տակ անտեսուած մեր առաջարկները, այս երկրորդ պատերազմին մեր կրած պարտութեան լոյսին տակ կ'արժանանան ուշադրութեան: Այս պարտութիւնը սթափեցնող ապտակ մը պէտք է ըլլայ բոլորիս համար, վերատեսութեան ենթարկելու մեր մտածելակերպն ու գործելաձեւը:

Ահաւասիկ մեր գլխաւոր առաջարկները:

Սերունդներու պատասխանատուութեան գիտակցութիւնը

Մենք կը հաւատանք, որ ամէն մէկ սերունդ, որպէս մէկ օղակը հայ ժողովուրդի պատմութեան երկար շղթային, պարտաւորութիւնը ունի իր նպաստը բերելու այդ շղթայի ամրակայման: Այդ գծով յաջողութեան հասնելու համար, ամէն մէկ անհատի մտածելակերպին մէջ պէտք է ամրագրուի հետեւեալ հարցումը. «ԵՍ ի՞նչ կրնամ ընել ԱԶԳԻՍ համար»: Մեր անձնականէն անդին, ազգին ալ օգտակար հանդիսանալու պատասխանատուութեան գիտակցութիւնը պէտք է ամրապնդուի մեր մէջ: Մայիս 6, 1995-ին, «Մասիս»-ի մէջ հրատարակուած մեր «Սերունդներու Պատասխանատուութիւնը» յօդուածին մէջ կը գրէինք. «Ամէն մէկ սերունդ պատասխանատու է պատմութեան շղթայի իր օղակին... Ուրեմն գիտակցինք մեր տկարութեանց ու սրբագրենք զանոնք: Բայց մանաւանդ գիտակցինք մեր զօրութեանց: Մենք զօրաւոր ժողովուրդ ենք: Այլապէս այսօր գոյութիւն պիտի չունենայինք, ինչպէս այսօր գոյութիւն չունին ժամանակին մեզմէ շատ ակելի ուժեղ եղած ազգեր... Պատմական առաքելութեան մը առջեւ կը գտնուի մեր սերունդը: 1988-ով սկսած մեր ազգային նորագոյն Չարթօնքը երկար ճամբայ ունի կտրելիք մինչեւ իրականացումը մեր անկատար երազներուն»: Այստեղ դարձեալ կ'արժէ մէջբերել վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի քիչ ծանօթ «Իմ Յաւը» բանաստեղծութեան վերջին քառատողը, առանց մեկնաբանութեան.

Հէք մարդկութեան մէկ ոստը գօս՝

Հայրենիք մը ունիմ թշուառ,

Չօգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,

Ոհ, այն է սոսկ ցա՛լ ինձ համար:

«Ամբողջ»ի արժէքին ընկալումը

Երբ ակնարկ մը կը նետենք հազարամեակներու մեր պատմութեան վրայ, բացայայտ կը դառնայ, որ հոն ուր առաջնորդուած ենք «ամբողջ»ի, այսինքն հայ ազգի շահերով, մենք յաղթանակներ կերտած ենք: Իսկ հոն, ուր «մաս»ի, այսինքն անհատի-տոհմի-կուսակցութեան շահերը գերադասուած են, ապա անպայմանօրէն տուժած է «ամբողջ»ը: 4 Յունուար 2003-ին հրատարակուած մեր «Ամբողջ եւ մաս» յօդուածին մէջ կը նշէինք. «Փոխանակ ժողովուրդին մէջ զարգացնելու «ամբողջ»ի՝ ազգային ոգիի գիտակցութիւնը, զայն միւրճեցինք վարչակարգերու եւ գաղափարախօսութեանց լաբիրինթոսին մէջ ու մասնատեցինք: Բաժան-բաժան ըրինք ժողովուրդը, որպէսզի ստեղծենք մեր մենաշնորհեալ ազարակները»: Մեր այս տկարութիւնը դարմանելու անհրաժեշտութեան անդրադարձած ենք շատ մը յօդուածներով, ինչպէս՝ «Անձնասիրութիւնէ դէպի ազգասիրութիւն», «Հասկնանք զիրար», «Խօսքն ալ կը սպաննէ», «Էականը», եւալն: Այս վերջինին մէջ կը նշէինք, որ հայ ազգի «մեծերը յաւերժացան, որովհետեւ անցողակիէն անդին ձգտեցան ծառայել յաւերժին: Անոնք

յաւերժացան, որովհետեւ իրենց անձէն անդին, ձգտեցան ծառայել հասարակութեան, ժողովուրդին, ազգին: Անոնք մեզի ականդեցին, որ երբ անձդ կը հաշտեցնես ազգիդ հետ եւ կ'ապրիս անով, ոչ միայն զարկ տուած կ'ըլլաս անձնականիդ զարգացման, այլ նաեւ ազգիդ: Բայց երբ անձիդ զարգացման համար կ'արհամարիես ու կ'անտեսես շրջապատդ, կամ կը փորձես յառաջդիմել ի հեճուկս հայրենակիցիդ ոտնակոխման, նպաստած չես ըլլար անձիդ ու ազգիդ երկարաժամկետ շահերուն»: Դժբախտաբար այս գիտակցութիւնը տակաւին չէ ընկալուած մեր ազգը առաջնորդել յաւակնող ղեկավարներու կողմէ: Այլապէս ականատես պիտի չըլլայինք այն դէպքերուն, որոնք կը պատահին:

Ազգային արեւելումի հիմնականութիւնը

Չանագան յօդուածներով շեշտած ենք ազգային արեւելում ունենալու հիմնականութիւնը մեր անկախ ճակատագրի կերտման գործընթացին մէջ: Հայաստանի անկախութեան 4րդ տարեդարձին առթիւ 23 Սեպտ. 1995-ին հրատարակուած մեր «Ազգային արեւելում» յօդուածին մէջ կը գրէինք. «Չտարուինք սին ու երագային խոստումներէ եւ յոյսերէ, ուրկէ որ ալ գան ատոնք. Ո՛չ արդարութիւն հայցենք աջէն ու ձախէն եւ ո՛չ ալ յետոյ, յուսախաբ ու վիրաւոր՝ թքնենք այդ արդարութեան երեսին: Այլ՝ գիտակցինք, որ այդ արդարութիւն ըսուածը ուղակիօրէն կապուած է մեր ուժին: Կ'ամբարե՞նք այդ ուժը՝ կը պահանջենք ու կը տիրանանք մեր իրաւունքներուն: Չե՞նք ամբարե՞ր մեր պահանջքը կը դառնայ ծիծաղելի, կը խեղճանանք ու կ'արհամարհուինք աջէն ու ձախէն»:

Ինքնախաբեութենէ ձերբագատուելու անհրաժեշտութիւնը

Ծանր է ընդունիլը, որ ազգովին կը տառապինք ինքնախաբեութենէ, բայց անհրաժեշտ քայլ մըն է այդ ընելը, որպէսզի առաջքը առնենք մեր կրած դժբախտութեանց եւ տակաւին մեզի սպառնացող վտանգներուն: Ազգովին չենք անդրադառնար, որ կը մսխենք անցեալէն մեզի հասած ժառանգութիւնը: Չենք անդրադառնար մեր թերիներուն եւ կը շարունակենք վատաբանել ու չհամարիլ տարբեր ազգեր, որոնք մեզմէ դարեր ետք երեւացին պատմութեան թատերաբեմին վրայ եւ մեզմէ շա՛տ առաջ անցած են: 3 Յունուար 2015-ին մեր հրատարակած «Ինքնախաբեութենէ ինքնաճանչութիւն եւ անդին» յօդուածով կ'անդրադառնայինք մեր այս ազգային հիւանդութեան ու կը նշէինք. «Ամէն մէկ հայ պետք է բարձրաձայն հարց տայ. «ա՛յս էր իմ Մեծ Երազը»:

Դժբախտաբար հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը բացասական պատասխան պիտի տայ այս հարցումին, Եղեռնի հետեւանքով պապենական հողէն տարագրուած հայէն մինչեւ վերջին տարիներուն Հայաստանէն արտագաղթած հայր: Ուրեմն բոլորս պարտինք բարձրաձայնել մեր դժգոհութիւնը այն բոլոր արատաւոր երեւոյթներու եւ արատաւոր մարդկանց դէմ, մանաւանդ ղեկավար դիրքերու վրայ գտնուողներուն, որոնք պատճառ կը դառնան համազգային յուսախաբութեանց:» Մեր այդ յօդուածին մէջ կը մեջբերէինք հաստատումներ Րաֆֆիէն, գրուած 150 տարի առաջ, որ

«ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է», որուն դարմանը կը կայանայ ինքնաճանաչութեան մէջ: Անոր շնորհիւ է, որ անհատին մէջ «առաջ է գալիս տոկուն աշխատությունը, դա է ոգեւորում մարդուն դեպի անդադար առաջադիմություն. Դա է ծնում հանճարները, արիեստը, գիտությունը եւ աշխարհի բարօրությունը: Դժգոհությունը իր վիճակից՝ մի ազնիւ գրգիռ է, որ տանում է դեպի նրա բարւոքումը»:

Ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան եականությունը

Որքան ալ հաճելի թուի հերոսի կերպարը, որ հրաշքներ կը գործէ, ան չի կրնար ապահովել պետութեան մը երկարատեւ բարօրությունը: Իսկ ինքզինքը հերոս կարծող բռնապետը, պարզապէս դժբախտություն է տուեալ երկրի ու ժողովուրդի համար, ինչպիսի «տղամարդ» ալ համարէ ինքզինք: Երկրի մը բարօրութեան ու յառաջդիմութեան համար եական են օրէնքի գերակայությունն ու ժողովրդավարությունը: 20 Օգոստոս 2011-ին հրատարակուած մեր «Աւատապետական Հայաստանի արհաւիրքը» յօդուածին մէջ կը նշէինք. «Երկրի վիճակի բարելաւումը չի կրնար գալ լոկ մէկ աւատապետը ուրիշով մը փոխարինելով: Անհատներէն անդին աւելի հրամայական է համակարգային փոփոխությունը, ժողովուրդի մտայնութեան եւ հոգեբանական վիճակի փոփոխությունը: Որքան տարածուն է երկրէն ներս ժողովրդավարութեան հիմքը, այնքան ամուր է երկրի դիրքը, այնքան երաշխաւորուած է երկրի բնակչութեան արժանապատիւ կեանք մը ապրելու իրաւունքն ու ապագան, որովհետեւ երկիրը կախեալ չէ միայն մի քանի անձերէ, որոնք կարելի է կաշառել, խեղճացնել եւ կամ Նոյնիսկ սպաննել: Փոխանակ մեր փրկությունը անհատներէ յուսալու, մենք պետք է զարկ տանք ժողովուրդի մտայնութեան մէջ Զարեհեան պատգամի ամրապնդման՝ հաւաքական ուժի գոյառման»: Ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան եականութեան մասին շատ անգամներ անդրադարձած ենք մեր յօդուածներուն մէջ, ինչպէս «Ժողովրդավարութեան եւ արժանաւոր առաջնորդներու կարիքը», «Ժողովուրդի քայլը», «Փոխադարձ վստահություն, միասնականություն, պատասխանատվություն եւ օրէնքի գերակայություն», «Ժողովրդավարություն եւ կայունություն», եւ այլն: Այս վերջինին մէջ կը նշէինք. «Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք մեր երկրի արժանապատիւ ապագայով, անոր տնտեսական վերելքով, արտաքին վարկի բարձրացմամբ եւ Արցախեան հարցի բարուք լուծմամբ, ապա առաջին հերթին պետք է ստեղծենք երկրէն ներս օրինական, արդար եւ ժողովրդավար իրաւակարգ: Մենք պետք է քաջ գիտակցինք, որ որեւէ պետութեան կայունութեան աստիճանը պայմանաւորուած է նախ եւ առաջ ժողովուրդի դաւանած արդարութեան, օրինականութեան, ազատութեան եւ ժողովրդավարութեան սկզբունքներու որակով»:

Պատմութենէն դասեր քաղելու կարելիությունը

19 Հոկտեմբեր 1991-ին «Մասիս»ի մէջ հրատարակուած մեր անդրանիկ յօդուածը խորագրած էինք՝ «Որպէսզի չկրկնուին անցեալի սխալները»: Անկէ ետք զանազան յօդուածներու մէջ զուգահեռներ մատնանշած էինք անցեալի եւ ներկայի դէպքերուն,

կարեւորելով անոնցմէ դասեր քաղելու անհրաժեշտութիւնը: Օրինակի համար նշենք, 2 Հոկտ. 2010-ին հրատարակուած՝ «Մարդարապատի հերոսամարտէն Կարսի խայտառակութիւն, Արցախեան հերոսամարտէն...» յօդուածը: Հոն կը գրէինք. «Արդեօ՞ք յուսահատական վիճակներու մէջ իտեալիստներու զոհաբերութեամբ կերտուած յաղթանակները աւարի կեր կը դառնան խաղաղ ժամանակներու պատեհապաշտներու, ազգային գիտակցութենէ եւ հայրենասիրութենէ զուրկ վաշխառուներու»: Մեր յօդուածը կ'աւարտէինք. «Կը գիտակցի՞նք արդեօք, որ այս ընթացքով Արցախեան հերոսամարտն ալ կրնայ յանգիլ նոր Կարսեան խայտառակութեան: Մտածենք ու գտնենք հնարը փոխելու այս ընթացքը»:

Այս յօդուածով մենք ջանացինք ամփոփ պատկեր մը տալ անցած 30 տարիներու ընթացքին հրատարակած մեր աւելի քան 300 յօդուածներով ջատագոված գլխաւոր միտքերուն: Նկատի առած յօդուածի մը սահմանափակ տարողութիւնը, բնականաբար դուրս ձգեցինք շատ մը այլ կէտեր: Բայց այսքանն ալ բաւարար է հաստատելու, որ եթէ մեր քաղաքական առաջնորդները, մտաւորականութիւնն ու ժողովուրդը, գործէին վերը նշուած կէտերու համոզումով, ապա մեր այսօրուան իրավիճակը շատ աւելի բարենպաստ պիտի ըլլար: Բազմաթիւ անգամներ մենք ահագանգ հնչեցուցած ենք, որ սխալ ընթացքի մէջ ենք եւ «մտածելակերպի ու գործելաձեւի ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԴԱՐՁ Է պետք, կասեցնելու քայքայման տանող մեր ներկայ ընթացքը: Այս հանգիստ բայց կործանարար ընթացքը պետք է ԱՆՀԱՆԳՍԱԶՏՆԵԼ նոր ուղիներու որոնումով եւ նոր հեռանկարներու պատկերացումով» («Կտրուկ շրջադարձ», 26 Ապրիլ 2014): Բազմաթիւ անգամներ մենք կարեւորած ենք մեր ապագան մեր ձեռքով եւ միասնական ուժերով կերտելու անհրաժեշտութիւնը: «Մարդ կայ, որ ճակատագրապաշտ է ու կը յանձնուի ճակատագրի քմայքին: Մարդ ալ կայ, որ կը հաւատայ թէ իր իմացական ուժով կարող է կերտել այն ճակատագիրը, որուն ինքզինք արժանի կը գտնէ:...Մենք մեր ձեռքով պիտի կերտենք մեր ապագան, վստահելով նախ եւ առաջ մեր սեպհական ուժին ու մեր արեան կանչին: Պիտի չհանդուրժենք, որ որեւէ ուժ, ներքին թէ արտաքին, կաշկանդէ մեր մտքերն ու մտածողութիւնը: Մտքեր կաշկանդողը չի՛ կրնար ազգը առաջնորդել արժանապատիւ ապագայի ուղիով: Համոզուած ըլլալով, որ մեզ նման փոքր ժողովուրդներու հաստատ ու արժանապատիւ ապագայի գլխաւոր երաշխիքը կը կայանայ նոյնինքն ժողովուրդի ուժաւորման եւ ժողովրդավար, արդար ու օրէնքի գերակայութեան հիմունքներով առաջնորդող հասարակարգի մը ստեղծման մէջ, բոլորիս պարտականութիւնը պետք է ըլլայ պայքարիլ յանուն այդ նպատակի իրագործման: Պետք է թիկունք կանգնինք այդ հաւատքով ոտքի ելածներու պայքարին ու անոնց գաղափարի տարածման: Որովհետեւ «անո՞նք կարող են յաղթել, որոնք կը հաւատան թէ կրնան»:» («Իշխանափոխութիւն՝ մտայնափոխութեամբ», 3 Յունուար 2009)

Արցախեան այս վերջին պատերազմին մեր կրած պարտութիւնը պետք չէ՛ ընկճէ մեզ, այլ՝ զօրացնէ մեր մարտունակութիւնը, քաւելու մեր սխալները եւ շարժուելու առաջ:

Մենք տակաւին յուսալից ենք, որ Հայաստանի երիտասարդ սերունդը մեզ պիտի
առաջնորդէ այդ ուղիով: Աւելի քան 400 տարի առաջ, Մոնթայն գրած է.

«Պարտութիւններ կան, որոնք աւելի փառաւոր են, քան՝ յաղթանակներ»: Մոնթայնի
խօսքի արդարացման գործընթացը կը սկսի մեր ձախողութեանց իսկական
պատճառներու բացայայտմամբ եւ պատասխանատուներու հաշուետուութեամբ:

There are no comments yet.